

ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Վրացի պատմաբանի ըողորը.—Գրական ֆունդ և «փոքր» զործողներ:—Թիֆլիսի
ուղղափառ սեմինարիայի մատուցած ծառայութիւնները:

Վրացիք շարունակում են զբաղուել իրանց գրողների վիճակով և նրանց գործունէութեան քննադատութեամբ: «Յնորիս Փուրցելի»-ի ֆելիետոնիստ պ. Սիտղվան իր յօդուածներից մէկում (№ 2283) մի քանի կծու խօսք չպրտեց անցողակի կերպով վրացի պատմաբանների հասցէին, առելով թէ նրանք, «ընդամենը մի երկու հոգի, հիմնաւորապէս չեն ուսումնասիրած իրանց առարկան»: Այդ սակաւաթիւ պատմաբաններից մէկը պ. Սիտղվային ուղղած իր պատասխանում (№ 2290) բացատրում է ընթերցող հասարակութեանը այն ողբալի բարոյական և նիւթական կացութիւնը, որի մէջ գտնւում է Վրաստանի անցեալի ուսումնասիրութեան նուիրուած գիտնականը: «Եթէ ինձ հարցնէք,—ասում է նա—մեր պատմաբանները ուղիղ որ հերոսներ են: Այն ժամանակ, երբ վրաց հասարակութիւնը երկս է զարձնում իր անցեալից, երբ նա այդ անցեալը ուսումնասիրողներին անուանում է՝ փթած-մթած, բորբոսնած իրերի քրքրող (քջող անող),—ծիշտ այդ ժամանակ նոյն այդ «քրքրողները» մեծ ջանասիրութեամբ ուսումնասիրում են մեր անցեալը, մեր ազգի երկար տարիների պատմութիւնը և գրա հետ միասին գոյութեան կոիւ են մշտում մի կտոր հացի համար, որ իրանց ընտանիքը սովամահ չը լինի. Մեղանում նոյն-իսկ թատրոնի յուշարարը տարին մի բենեֆիս ունի, բայց մեր

անցեալի ուսումնասիրողը և նրա «յուշարարը» ոչ միայն բնեփիսի չէ արժանանում, այլ նոյնիսկ մի գատարի քաջալերական խօսք չէ լսում իր ամբողջ կեանքում»:

Այդ սրտաճմլիկ խօսքերից յետոյ յօդուածագիրը նկարագրում է վրացի պատմաբանի ծանր դրութիւնը և՛ այն կողմից, որ վրաց պատմութիւնը զեռեռ բոլորորին անմշակ է, չ'ունի մենագրութիւններ (մոնոգրաֆիաներ), նիւթերի ժողովածոներ, զիւր ու ցան արձանագրութիւնների պատճէններ... Մի որեւիցէ ուսումնասիրութիւն պատրաստելու համար նա ստիպուած է հսկայական ջանքեր թափել, ամեն բան մենակ ինքն անել, աշխատութիւնը իր հաշուով տպագրել և գնել այն հասարակութեան առաջ, որ չէ աջակցում նրան ոչ խօսքով, ոչ զգացմունքով և ոչ գործով... Եւ հասարակութիւնը չէ առնում նրա աշխատութիւնը, ինչպէս և՛ մի քանի կոպէկ տալ, իսկ յաճախ էլ զրաւաճառներն և՛ իւրացնում վաճառումից զոյսցած փողը և հեղինակին ոչինչ չ'են տալիս...

Ո՛րքան պարզ և հասկանալի է այս բոլորը հայ մարդու, հայ գրողի համար... Ի՞նչպիսի ծանօթ, հալընի ձայն է հնչում վրացի գրողի սրտի խորքից բղիսած այդ դառն գանդափից... Եւ այդ վրացին էլ վերջացնում է իր գրուածքը ճիշտ այնպէս, ինչպէս այդ կ'անէր մի սրտացաւ և իրականութեան քուրայով անցած մի հայ գրող. «Չը նայեյով այդ ամենին,—ասում է յարգելի պարոնը—մեր գրողները չեն ստուգում և էլի շարունակում են սիրելի գործը՝ համոզուած լինելով, որ եթէ այսօր չէ գնահատուում նրանց աշխատանքը, նա կը գնահատուի ապագայում, որ եթէ այսօր վրացիք ուշադրութիւն չեն դարձնում իրանց հարուստ պատմութեան վրայ, ապագայում կը դարձնեն նրանք»...

Մեր ընթերցողներին յայտնի պ. Դուտու Մեգրելու առաջարկութիւնը տաղանդաւոր գրողներին ապահովացնելու մասին առիթ տուեց պ. Է. Վաչակիձէին տպելու «Ի վերիայում» (№ 210) մի ընդարձակ յօդուած «Գրագիտութիւն տարածելու հարցը մեզանոց» վերնագրով:⁵ Յօդուածագիրը՝ մեծ համակրութեամբ միանալով պ. Մեգրելու առաջարկութեանը, անում է նաև մի յաւելում,—նա առաջարկում է հիմնել Պետերբուրգի գրողների ունեցած «գրական ֆոնդի» նման մի հիմնարկութիւն, այսինքն ոչ միայն կանոնաւոր, ուճկի նման օգնութիւն հասցնել մի. քանի ընտիր գրողներին, այլև պատահական և այլ տեսակ նպաստներ տալ առհասարակ կարիք ունեցող գրական մշակներին: Այնու-

հետև ալ՝ Վաչակիձէն աւելի մանրամասն է խօսում՝ գրականական հարցի նշանակութեան մի ուրիշ կողմի վրայ։ Ազգային ընտիր գրողները չեն կազմում մի խոշոր երջանկութիւն այն հասարակութեան համար, որի մեծամասնութեանը ամենին յայտնի չեն այգայիս գրողների հեղինակութիւնները։ Վրացի գրողների բոլոր գրուածները տպագրուած են միայն ամապրետում եւ լրագրերում, որոնք չափազանց քիչ են տարածուած հասարակութեան մէջ, նամանաւանդ գիւղերում։ Միայն շատ տարիներ անցնելուց յետոյ այդ գրուածների մի մասը արտատրւում է աւելի մեծ հասարակութեան համար, սակայն այդ արտատպումները կազմելով գլխաւորապէս խոշոր ժողովածուներ՝ մնում են դարձեալ անօգուտ ժողովրդի չքաւոր, անուս մեծամասնութեան համար՝ իրանց անմատչելի գնի եւ անյարմար ձևի պատճառով։ «Ժողովրդին ինչ օգուտ,—բացազանչում է ալ՝ Վաչակիձէն—ձեր այդ նշանաւոր, ազդի պարծանք գրողներից, երբ դրանց քարոզած ոչ մի միտք, դրանց ստեղծագործած ոչ մի պատկեր անուշ չեն տալիս նրա սրտին եւ հոգուն, մնում են ոգւէս հոգի մէջ թաղուած մարդարիտ»։

Այդ անբնական դրութեան առաջն առնելու համար յօդուածագիրը ցանկութիւն է յայտնում, որ վրաց տաղանդաւոր գրողների, այդ «մեծ» գործիչների կողքին հանդէս գան նաև «փոքր» գործիչներ, որոնք քաղցր պարտականութիւն զգան արտատպելու անմիջապէս պարբերական հրատարակութիւններից բոլոր ընտիր, չքնաղ գրուածները եւ փոքրիկ, 5—10 կուէկ արժեղութեան դրբայիներով տարածելու նրանց՝ տասնեակ հազարներով եւ իրանց գործակալների միջոցով՝ ժողովրդի ստորին խաւերում, նամանաւանդ գիւղացիների չրջանում...

«Այսօրուայ օրս,—չարեւակում է ալ՝ Վաչակիձէն—այդ «փոքր» գործիչների աշխատանքի նշանակութիւնը ոչնչով պակաս չի լինի մեր հասարակութեան համար՝ տաղանդաւոր զրուածներ հեղինակելուց։ Եւ դրանց «փոքր» անունը ապագայում հոյակապ անուան կը վերածուի ուղիղ այնպէս, ինչպէս որ Գրիստոսի պատիրանները աշխարհի չոքս կողմը սփռող հասարակ ձկնորսները երկրպագութեան արժանի առաքեալներ դարձան»։

Ներկայ հոկտեմբեր ամսի 1-ին լրացաւ Թիֆլիսի ուղղափառ հոգևոր սեմինարիայի հիմնադրութեան 85-ամեակը։ Սկզբից եւեթ եւ մինչև օրս այդ հոգևոր միջնակարգ դպրոցի սաների ահագին մեծամասնութիւնը եղել են վրացի ծագումով պատանի-

ներս Ալեքի առաջ ունենալով նրա կատարած խոշոր դերը վրաց ազգի ինքնաճանաչութեան զարգացման գործում, «Յնոբիս-ֆուրցելին» նուիրեց այդ օրը մի ասանձին յօդուած (№ 2280) յիշեալ սեմինարիայի ծնցեալին և նրա տուած արդիւնքների բացատրութեանը, Լրագրի բերած երկար ցանկից մենք տեսնում ենք, որ 19-րդ դարի երկրորդ կէսի վրաց անուանի ու բազմաբղիւն եպիսկոպոսների, գրողների, գիտնականների, մանկավարժների և հասարակական այլևայլ գործիչների խոշոր մեծամասնութիւնը դուրս է եկել այդ հոգևոր կրթարանից: Այդ գործողներից չատերը կեանք են մտել ուղղակի սեմինարիայի նպատարանից, իսկ մնացածները սկսել են իրանց հասարակական գործունէութիւնը տէրութեան բարձրագոյն ուսումնարաններում ուսումը չարունակելուց յետոյ: Վրաց հասարակութեանը շատ լաւ յայտնի է, որ այդ մի քանի տասնեակ հոգեւոր մարդկանց կողքին միշտ կանգնած են եղել նաև հարիւրաւոր նուազ նշանաւոր, բայց ժողովրդի շահերին, նրա ինքնաճանաչութեան զարթման գործին անկեղծ կերպով նուիրուած մշակներ, որոնք նոյնպէս նոյն մտաւոր օջաղի աշակերտներն են եղել:

Թիֆլիսի սեմինարիայի այդ բարերար ազգեցութիւնը «Յնոբիս-ֆուրցելին»-ն պատճառաբանում է այն ասանձին ոգով և ուղղութեամբ, որ սկզբից ենթ հիմք դրին այգտեղ, այգտեղ տիրապետեց հին վրաց հոգևոր-ազգային ուսումնարանների տրագիգիան: Այդ տրագիգիան՝ գօրեղ էր մանաւանդ զարոյցի դրութեան նախորդ տասնեակ տարիներում: «Այն ժամանակ, — աւելացնում է յօդուածագիրը — սեմինարիայի ծրագիրը համապատասխան էր մեր կեանքին ու պահանջներին, և այդ պատճառով էլ նա աւելի բարձր էր կանգնած և աւելի նշանակութիւն ունէր մեզ համար, քան աշխարհական միջնակարգ ուսումնարանները (գիմնազիաները), սեմինարիայում դաս էին տալիս վրաստանի քաղաքային պատմութիւնը, նրա եկեղեցու պատմութիւնը, վրաց գրականութիւնը: Այդպիսի մի ծրագրի և հին տրագիգիայի չնորհեալ Թիֆլիսի սեմինարիան տուաւ ազգային նշանաւոր գործողների մի շարք, որը մեծ գործ կատարեց ժողովրդի ինքնաճանաչութեան զարգացման շարունակում»:

Լրագիրը յոյս ունի, որ նա այսուհետեւ էլ՝ չը նայած իր ծրագրի բաւականաչափ փոխուելուն՝ կը շարունակէ ընծայել Կովկասի վրաց հասարակութեանը պիտանի անդամներ:

Կարդալով վրաց լրագրի այդ յօդուածը, մարդ չէ կարող ակամայ չը յիշել, որ ճիշտ նոյն ականաւոր դերը կատարել է

Կովկասում հայ հասարակութեան վերաբերութեամբ նոյն թիֆ-
լիս քաղաքում և նոյնպէս մօտ 80 տարի ապրած՝ Ներսէս Ե.
Կաթողիկոսի ձեռքով հիմնած հայոց ազգային-հոգեւոր դպա-
րոցը...

Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆ